– Կե՛ր, սիրելի՛ կռունկ, ինքս եմ պատրաստել, շա՜տ համեղ է:

Կռունկն իր երկար կտուցով կտկտացրեց ափսեին, բայց ոչինչ չկարողացավ ուտել: Աղվեսը, լիզելով, մենակ խփշտեց ամբողջ շիլան և ասաց.

– Ափսո՛ս, որ ուրիշ բանով չեմ կարող հյուրասիրել:

– Ես կերածիս համար էլ շնորհակալ եմ: Հիմա էլ դո՛ւ ինձ հյուր արի:

Հաջորդ օրը աղվեսը հյուր գնաց կռունկին:

Կռունկը ապուր էր եփել, լցրել երկարավիզ մի սափորի մեջ ու դրել սեղանին:

– Կե՛ր, – ասաց նա աղվեսին, – դժբախտաբար ուրիշ բան չունեմ:

Քաղցած աղվեսը պտտվեց ապուրի շուրջը, հոտոտեց ու լիզեց սափորի շուրթերը: Գլուխն ավելի

---

* Նախատեսված է էջ 11 -ի դասի հետ ընթերցվելու կամ անգիր սովորեցնելու համար:

մեծ էր, քան սափորի վիզը, և աղվեսի բերանը չէր հասնում ապուրին:

Կռունկն իր երկար կտուցը մտցրեց սափորի մեջ և մենակ կերավ ամբողջ ապուրը:

Աղվեսը կարծում էր, թե ամբողջ շաբաթ քեֆ կանի կռունկի հաշվին, բայց ստիպված եղավ սոված փորով վերադառնալ: Ի՞նչ կարող էր անել. թողեց հեռացավ անտառի խորքը: Իզուր չի ասված. *«Ինչ որ ցանես, այն կհնձես»:*

Այդ օրվանից էլ աղվեսի ու կռունկի բարեկամությունը վերջացավ:

***Աթաբեկ Խնկոյան***

## ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ (էջ 19)

Բախտի բերմամբ
Թե պատահմամբ՝
Մի մեծ ագռավ
Մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թռավ:
Օ՛, ի՛նչ պանիր՝ դեղին ոսկի...
Բայց դեռ չառած համը խսկի՝
Աղվեսն անցավ ծառի մոտով,
Գերվեց,
Էրվեց
Պանրի հոտով:
Վազեց գնաց բերնի ջուրը,
Եվ թուլացան կուռն ու ճուռը:
Էն ժամանակ իրա ձևին,
Ծառի տակից՝ աչքն ագռավին,
Հեզիկ, նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն, անո՜ւշ, մեղո՜ւշ
Թափեց, չափեց շաքար ու նուշ.
– Ինչքա՛ն լավն ես,
Ես՝ քո գերին,
Քո էդ սևիկ
Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զույգ թևերին:
Մի դու մտի՛կ,
Էդպես քթի՛կ,
Էդպես ճտի՛կ,
Մախմուր ագին,
Խաս ու դումաշ,
Ատլասն հագին:
Գիտեմ, անշուշտ, իմ քուրիկի
Ձայնն էլ կլնի հրեշտակի:
Երգի՛, քուրի՛կ, մի՛ ամաչի,
Իմ ուզածը մի մեծ բանի չի:
Թե որ չքնաղ էդ տեսքիդ հետ
Երգելում էլ եղար վարպետ,
Օ՛, կդառնաս, իմ մաքրուհի՛,
Թռչունների մայր թագուհի:
Ագռավն ագին, իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած,
Ագռավային
Բկովը մին
Որ չկռռաց,
Պանիրն ընկավ ծառիցը ցած,
Շողոքորթը ըռխեց, գնաց:

***Հովհաննես Թումանյան***

## ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ (էջ 21)

*(հեքիաթ)*

Աքաղաղը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհը տեսնի: Վիզը ձգեց, բայց բան չտեսավ: Դիմացի սարը խանգարում էր:

– Քուչի՛ ախպեր, կարելի է դու գիտե՞ս՝ սարի հետևում ի՞նչ կա, – հարցրեց նա բակում պառկած շանը:

– Ես էլ չգիտեմ, – պատասխանեց քուչին:

– Մինչև ե՞րբ պետք է այսպես մնանք: Արի գնանք մի տեսնենք՝ աշխարհում ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Շունը համաձայնվեց: Խոսքերը մեկ արին ու տնից փախան: Գնացի՜ն, գնացի՜ն, երեկոյան հասան մի անտառ: Գիշերը մնացին այնտեղ: Շունը պառկեց թփի տակ, իսկ աքաղաղը բարձրացավ մոտիկ ծառը, ու քնեցին:

Լուսադեմին աքաղաղը կանչեց՝ ծուղրուղո՜ւ:

Աղվեսը լսեց աքաղաղի ձայնը:

«Վա՜խ, սա որտեղի՞ց դուրս եկավ, ա՜յ լավ նախաճաշ»,- մտածեց աղվեսն ու մոտեցավ:

– Բարի լո՜ւյս, ոսկեփետո՜ւր աքաղաղ, ի՞նչ ես շինում այս կողմերում,– հարցրեց աղվեսը:

– Գնում ենք աշխարհ տեսնելու, – պատասխանեց աքաղաղը:

– Օ՜, ի՞նչ լավ բան եք մտածել, – պատասխանեց աղվեսը: – Քանի ժամանակ է՝ ես էլ մի կարգին ընկեր եմ փնտրում: Լավ է՝ պատահեցիր: Դե ցա՜ծ արի, որ չուշանանք:

– Ես համաձայն եմ, – ասաց աքաղաղը,– բա՜ն, ընկերս էլ համաձայն է՝ ցած գամ, գնանք:

– Որտե՞ղ է ընկերդ:

– Այն թփի տակ:

«Սրա ընկերն էլ երևի իր նման մեկը կլինի, այդ էլ իմ ճաշը», – մտածեց աղվեսը և վազեց թփի կողմը:

Հանկարծ շունը որ դուրս չեկավ, աղվեսը, պո՜ւկ, փախավ, ո՜նց փախավ:

– Կա՜ց, աղվե՜ս, մի՛ շտապիր, մենք էլ ենք գալիս, այդպես ընկեր չի լինի, - ծառի վրայից ծիծաղելով ձայն տվեց աքաղաղը:

***Վազգեն Տալյան***

## ԱՇՈՒՆ

Վա՜յ, գժվել են տերևները,
Պար են գալիս փողոցում.
Շփոթել են վարն ու վերը,
Ո՛չ մայթ գիտեն, ո՛չ անցում:

Մեկ խշշալով լցվում են բակ,
Մեկ էլ հանկարծ փախչում դուրս,
Մեկ քչփչում պատերի տակ,
Մեկ պառկում են սուսուփուս...

Փոքրիկ Մարոն դուրս է եկել,
Նայում նրանց, զարմանում.
– Այս ի՞նչ պար է, այս ի՞նչ երգ է,
Այս ինչե՞ր եք դուք անում:

Եկե՜ք մեր տուն. անձրև կգա,
Ձեզ կթրջի, ջուր կանի...
– Քամուն կասենք, մեզ թև կտա,
Ամպից էլ վեր կտանի:

Է՜հ, չի լսում քամին խենթուկ,
Հա՛ սուլում է, թռչկոտում,
Խաղ է անում ամպի հետ թուխ,
Կաթիլները պոկոտում...

Վա՜յ, գժվել են տերևները,
Պար են գալիս, ծիծաղում,
Իսկ գայրացած մութ ամպերը
Բարակ անձրև են մաղում:

# ԱՇՈՒՆ

*Խոսք՝ Հովհաննես Թումանյանի*
*Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի*




Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:

Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է, տանում
Տերևը դեղին:

Տխուր հանդերից
Ամենքը տրտում
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բույն:

## ԻՄ ՊԱՊԻԿԻ՛ ՀԱՅԱՍՏԱՆ (էջ 60-61)

*Խոսք՝ Յուրի Սահակյանի*
*Երաժշտ.՝ Գեղունի Չթչյանի*




Կա աշխարհում մի Հայաստան,
Կա աննման մի երկիր՝
Նման պապիս հեքիաթներին,
Նման փափիս երգերին:

**Կրկներգ.-**
Իմ պապիկի՛ Հայաստան,
Իմ փափիկի՛ Հայաստան,
Հայոց շունչը ինձ պարգևող,
Իմ անուշի՛կ Հայաստան:

Ծաղիկները ամենալավ
Միայն այստեղ են աճում,
Աղբյուրները ամենապաղ
Այստեղ են զիլ կարկաչում:

**Կրկներգ.-**

Արևը ջերմ՝ մայրիկի պես,
Գուրգուրում է թուփ ու ծառ,
Որ ամպերը մոտ չգան մեզ,
Որ հնչեն երգ ու ծիծաղ:

**Կրկներգ.-**

*Դերենիկ Դեմիրճյան*

## ՊՈՒՅՊՈՒՅ ՄՈՒԿԻԿԸ (էջ 50-51)

Մի երկիր կա՝ Հնդստան,
Մի մուկիկ կար՝ ճստճստան,
Հնդստանի անտառում՝
Կոկոս ծառի ծակուռում:

Ապրում էր նա իր համար
Բարիքներում անհամար
Ու մի օր լավ, մի օր վատ՝
Ուներ ապրուստ քիչ թե շատ:

Օրը մի ճանճ, մի միջատ,
Մի ծեղ, արմատ, ցորնի հատ
Ուտում էր ու քեֆ անում,
Խաղում, ապրում իր բնում:

Իր անունը Պույպույ էր,
Ազգանունը՝ Ճստունի,
Լացը՝ վայ-վայ, վույ-վույ էր,
Երգը՝ փարայ-նայ-նի-նի:

Էսպես մուկիկն ապրում էր՝
Վազվզելով վար ու վեր,
Ու մի օր էլ ծանր ու մեծ
Իրեն-իրեն միտք արեց.

«Տունս՝ կոկոս ծառի տակ,
Բերան չունե՞մ, թե՞ ճաշակ.
Ճանճ կերել եմ, ծեղ կերել,
Տեսնեմ կոկոսի համն էլ»:

Այս ասելն էր, մեկ էլ՝ դո՛մփ,
Ծառից կոկոսն ինչպես բոմբ
Ընկավ նրա առաջին:-
Կոկո՛ս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեսակ, սեխի չափ,
Միջուկն անո՛ւշ, յուղալի,
Բայց կեղևն է միայն հաստ.
Ահա՛ ինչն է ցավալի...

Վրա ընկավ մուկիկը,
Բացեց իր սուր ճանկիկը,
Կծե՛ց, կծե՛ց, կծոտե՛ց,
Բան դուրս չեկավ, չհաջողվեց:

Ու կոկոսի չորս կողմը
Ման է գալիս Պույպույը:

Կեղևն հաստ է, ո՞նց անի,
Ու սկսեց վայ-վույը.

«Ախր ի՞նչ է, ի՞նչ կլնի՝
Տեսնեմ դրա համն էլի:
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,
Գոնե մի՛ կում, մի՛ պտճուր»:

Դու մի ասի՝ ընկնելուց
Ծակ էր բացվել կոկոսում.
Էդ որ տեսավ, հիմի էլ
Ծակից մտնել էր ուզում:

Բայց տեսե՛ք՝ ի՞նչ պատահեց.
Ծակն էր պստիկ, ինքը՝ մեծ.
Ծակիցը ներս չի մտնում,
Սովից էլ ուշքն է գնում:

Լաց է լինում մուկիկը...
Ո՞նց լաց չլնի մուկիկը...
Սիրտն ուրիշ բան չի ուզում,
Նայում է ու նվազում:

Էսպես լացեց սուգ արեց,
Էնքա՛ն լացեց սուգ արեց,
Հետն էլ սովից լղարեց:

Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, ճանճի պես
Ծակից մտավ, գնաց ներս:

Էս ի՞նչ էր, տո՛, ո՞նց եղավ,
Էս ծակից ո՞նց ներս մտավ,
Ո՞նց, ա՛յ, նայի՛ր, էս մուկը,
Էս կոկոսն ու միջուկը:

Դե քե՛ֆ արա, օխա՛յ, օխա՛յ,
Դե պա՛ր արի, փարա՛յ, նանա՛,
Դե միջուկը կե՛ր ու կրծի՛ր,
Կե՛ր միջուկը, հյութը խմի՛ր:

Հա՛մ ուտում է, հա՛մ էլ պարում,
Հա՛մ պարում է, հա՛մ էլ երգում.
«Ինքս՝ Պույպույ, պարս՝ փույփույ,
Էլ ի՞նչ վայ-վա՛յ, էլ ի՞նչ վույ-վո՛ւյ»:

Էսպես թռչում, ծափ էր տալիս,
Պար էր գալիս, ռանգի, յայլի,

Գոռում էր՝ ջա՜ն, փարայ-նի-նի,
Ա՜յ թե քեֆը ինչպե՜ս կլնի:

Էս որ էսպես կերավ, մաքրեց,
Առաջ փոքր էր, հիմա պոզեց,
Տոզեց, դարձավ խոշոր մի մուկ,
Ընկավ կողքին, քնեց խորունկ:

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,
Էհ, մուկիկը վեր կացավ, որ
Փուչ կոկոսի ծակից դուրս գա.
Ախր դուրսը գործ կա, պուն կա:

«Լավ էր, կերանք բավականին,
Հիմի գնանք մենք մեր բանին»:
Հեշտ էր ասել... Ապա փորձի՛ր,
Մի կոկոսի ծակից անցի՛ր:

Մոտեցավ, որ ծակից դուրս գա,
Պահո՜... Տեսավ ճամփա չկա.
Ինքը՝ խոշոր, ծակը՝ պուճուր...
Այդ է, մնաց, բայց մնա ո՛ւր...

Լաց է լինում մուկիկը:
Ո՞նց լաց չլնի մուկիկը:
Տոզել է կոկոսում,
Մնացել է նեղ փոսում:

«Ինչի՞ս էր պետք կոկոսը,
Լավ չէ՞ր իմ պուն, իմ փոսը.
Վայ, վայ, վայ, վա՜յ, վույ, վույ, վո՛ւյ,
Հիմի փե՛ղն է քեզ, Պույպո՛ւյ:

Ախր ի՞նչ բան ունեիր՝
Գայիր կոկոս ուտեիր.
Չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞,
Ցավ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞...
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,- զահրումա՛ր,
Դե լա՛ց, մնա՛ քեզ համար:

Էսպես լացեց մուկիկը.
Էնքա՜ն լացեց մուկիկը,
Հետն էլ սովից լղարեց:-

Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, սուս ու փուս
Ծակից նորից ելավ դուրս:

Վա՜հ, էս ի՞նչ էր, էս ո՞նց եղավ,
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ:
Ո՞նց... ա՛յ, նայի՛ր, էս են՝ մուկը.
Էն՝ կոկոսը, էն՝ միջուկը:

Տեսա՛ր լավ բան, կեցցե՛ս, Պույպո՛ւյ,
Տո էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «վույ-վույ».
Տո քե՛ֆ արա, օխա՛յ, օխա՛յ,
Դե պա՛ր արի, փարայ-նի-նա՜...

Հա՛մ թռչում է, հա՛մ պարում է,
Հա՛մ երգում է, հա՛մ կանչում է,
Ջա՜ն, քե՛ֆ արա, փարայ-նի-նի՛,
Ա՜յ թե քեֆը ինչպե՛ս կլնի:

***Սիլվա Կապուտիկյան***

## ՉՅՈՒՆԸ

- Մայրի՛կ, հապա դո՛ւրս նայիր՝
Ինչքան ձյո՛ւն է ցած գալիս,
Ինչքան սպիտակ ծաղիկնե՛ր,
Ծաղկի փոքրիկ թերթիկնե՛ր.
Գնամ բռնեմ ու բերեմ,
Մեր սենյակը զարդարեմ:
Վա՛յ, մայրի՛կ ջան, ի՞նչ անեմ,
Նրանց ինչպե՞ս ես բռնեմ.
Հենց որ ձեռքիս են դիպչում,
Իսկույն հալվում են, կորչում...

## ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՐԳ - ՊԱՐ

*Խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի*
*Երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի*




Թ-ևին առած փարին այս նոր՝
Ձմեռ Պապին սարեր անցել
Ու հարկերի փակ մեր բոլոր
Ուրախ սեղան է նա բացել:

**Կրկներգ. -** Լա՛, լա՛, լա՛, ...

Երգ են ասում աղջիկ, տղա,
Թ-ռչկոտելով անհոգ պարում,
Եղևնին է սիրով նրանց
Իր ճյուղերով ծափահարում:

**Կրկներգ. -** Լա՛, լա՛, լա՛, ...

**Ռեչիտատիվ. -** Ու մաղթում է Ձմեռ պապին.
Թող խինդ լինի միշտ ձեր ճամփին:

***Սուրեն Մուրադյան***

## ՏՈՆԱԾԱՌ

Ժիր փոքրիկները դահլիճում պայծառ
Զարդարել են մի հսկա տոնածառ:

Բազմել են ծառին սիրամարգ, ջայլամ,
Սկյուռ, փայտփորիկ, հոպոպ ու այծյամ:

Կախվել են ծառից կապիկն ու լորը,
Աղվեսի կողքին՝ չաղլիկ աքլորը...

Շլիկն է բազմել՝ աչքը գազարին,
Աղավնին թառել ծառի կատարին:

Էլ ինչո՞ւ փխրի եղևնին սիրուն.
Այստեղ ուրախ է, քան ցուրտ անտառում:

## ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԵՔԻԱԹ

Շա՜տ-շա՜տ դարեր առաջ՝ձմեռային մի ցուրտ գիշեր, ծնվեց մանուկ Հիսուսը: Հրեշտակներն անմիջապես իմացան Հիսուսի ծնունդի մասին: Նրանք շտապեցին փոքրիկ մանուկի մոտ և երգեր երգեցին նրա համար: Հովիվները լսեցին հրեշտակների ձայնը և նրանցից իմացան Հիսուսի ծնունդը:

– Մեր ամենալավ ոչխարները կնվիրենք նրան, – ուրախ ասացին հովիվները:

Մոգերն էլ ճամփա ընկան՝ Հիսուսին տեսնելու համար: Հետևելով երկնքում փայլող աստղին՝ նրանք գտան Հիսուսին: Մոգերը թանկագին նվերներ տվեցին փոքրիկ մանուկին:

Մի փոքրիկ տղա նույնպես լսեց Հիսուսի մասին, և ինքն էլ եկավ, որ տեսնի նրան: Նկատելով, որ բոլորը նվերներ են տալիս Հիսուսին, տղան շատ փխրեց: «Ես ի՞նչ պիտի տամ փոքրիկ մանուկին, ես ոչինչ չունեմ նրան նվիրելու»,- մտածեց նա:

Երկնքի աստղերը որոշեցին օգնել փոքրիկ տղային: Հիսուսի ծնված տեղից ոչ հեռու մի փոքրիկ կանաչ եղևնի էր կանգնած: Աստղերը մեկ-մեկ ցած իջան ու կամացուկ նստեցին եղևնու ճյուղերի վրա: Եղևնին ադամանդի պես սկսեց փայլել ու շողալ լույսերի մեջ:

Տղան անչափ ուրախացավ: Նա վերցրեց ծառն ու տարավ մանուկ Հիսուսին՝ նվեր: Երբ Հիսուսն արթնացավ ու ծառը տեսավ, շատ ուրախացավ այդ սիրուն նվերի համար:

Այդ օրվանից եղևնին դարձավ տոնածառ և ուրախացրեց միլիոնավոր մանուկների:

*Պատրաստիր Նոր տարվա բացիկ՝ ներդիրից կտրելով եղևնու նկարը և այն զարդարելով տրված նկար-խաղալիքներով*

*Սիլվա Կապուտիկյան*

## ԾԻՏԻԿՆ ՈՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Ձյուն-ձմեռ է, ցուրտ ձմեռ է.
Շա՜տ են սոված ծիտիկները:

Ու մի ծիտիկ մոտիկ եկավ,
Պատշգամբում փշուր գտավ:

– Վա՜յ, խե՜ղճ ծիտիկ, ի՜նչ սոված ես.
Ա՜ռ այս գաթան, բոլորը քեզ:

Ծիտիկն ուրախ ծի՜վ-ծի՜վ արեց,
Գաթան իսկույն կտցահարեց:

Հետո գնաց, հասավ ծառին,
Գնաց՝ բերի ընկերներին.

Չէ՞ որ դրսում ցուրտ ձմեռ է,
Շա՜տ են սոված ընկերները:

## ՉԱՐԻ ՎԵՐՋԸ (էջ 70-71)

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Ծառում մի փչակ,
Փչակում մի բուն,
Բնում երեք ձագ,
Ու վրեն Կկուն:
– Կո՛կու, կո՛կու, իմ կուկունն՛ր,
Ե՛րբ պիտի դուք առնեք թևեր,
Թռչե՛ք, գնաք,
Ուրախանաք...
Երգում էր մարիկ Կկուն,
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ:
– Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Ախ դու Կկու, հիմա՛ր Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
– Երեք հատ ձագ, աղա Աղվես:
– Երեք հատ ձագ ցույց կտամ քեզ:
Ու չե՛ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա դրկես ինձ մոտ:
Չգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
– Վա՛յ, չկտրես,
Աստված սիրես,
Էս մինն առա
Տար քեզ ծառա,
Միայն թե էդպես
Մի ջնջիլ մեզ
Բնով-տեղով,
Ամբողջ ցեղով...
Խնդրեց մարիկ Կկուն ու ձագերից մինը ձգեց ներքև: Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց:
– Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թփի տակ
Կորար մենակ...
Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն, մին էլ, ըհը՛, Աղվեսը եփ եկավ:
– Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Ախ դու Կկու, հիմա՛ր Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
– Երկու հատ ձագ, աղա Աղվես:
– Երկու հատ ձագ ցույց կտամ քեզ:
Ա՛խ, չարամիտ դու ավազակ,
Ի՛նչ խաբար է, երկո՛ւ հատ ձագ.
Ի՛նչ, ուզում էս էսպեղ զոռով
Լցնես ամբողջ կկուներո՞վ...
Չգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
– Վա՛յ, չկտրես,
Աստված սիրես,
Էս էլ առ տար,
Ու թող դադար՝
Վերջինը գեթ
Մնա ինձ հետ...
Աղաչեց մարիկ Կկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքև:Աղվեսը՝ հա՛փ, էս էլ առավ ու գնաց:
- Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,
Ընչի՞ համար
Եկա ես սար,
Բուն շինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն եկավ,

Տարավ, կերավ,
Երկու, երկու,
Կուկու... կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն:

Էս միջոցին՝ ղա՜, ղա՜, ղա՜, Ագռավն անց էր կենում էն կողմերով: Լսեց Կկվի լացի ձայնը:

– Էդպես փխուր ու զարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կկու քուրիկ:
– Ինչպես չլամ, ա՜ սանամեր.
Աղվեսն եկավ էն սրփամեռ,
Գլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներս տարավ, կերավ:
– Վո՛ւյ իմ աչքին, անխելք Կկու,
Ինչպես իզուր խաբվել ես դու
Սուտ խոսքերին չար Աղվեսի:
Ո՞նց թե սարը իմն է՝ կասի:
Ո՞վ է տվել էն լրբին սար.
Սարն ամենքիս է հավասար...
Ո՞վ կթողնի վեր կենա նա
Ամբողջ սարին գա տիրանա,
Անունը տա սրած կացնի,
Սրան-նրան սուտ վախեցնի
Ու մինն էսօր, մյուսը երեկ
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...
Սև գրողի էն տարածին
Ո՞վ է տվել սրած կացին:
Մին էլ որ գա ու սպառնա,
Մի՛ վախենա, քշի գնա:

Էսպես ասավ Ագռավն ու թռավ գնաց: Ահա կրկին Աղվեսն եկավ:

– Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է...

Հազիվ էր ասել, Կկուն բնից գլուխը հանեց.

– Սուտ ես ասում, դու խաբեբա,
Անխիղճ գազան, անկուշտ, ագահ,
Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է հավասար:
Ի՞նչ ես եկել սուտ տեր դարձել,
Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Ձագուկներս տվել եմ քեզ...
Կորի՛, գնա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան սուտ ես ասել,
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.
Կացին չունես ծառը կտրես:
– Ո՞վ ասավ քեզ:
– Ագռավն ասավ:
– Ագռա՞վը, լավ:

Ու Ագռավի վրա բարկացած՝ Աղվեսը պոչը քաշեց, հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ, վեր ընկավ, իբրև թե սատկել է: Ագռավն էլ կարծեց՝ իրավ սատկել է, թռավ եկավ վրեն իջավ, որ աչքերը հանի: Աղվեսը՝ հա՜փ, հանկարծ բռնեց:

– Ղա՜-ղա՜-ղա՜-ղա՜,
Աղվե՛ս աղա...
– Ա՛յ դու կռավան չարալեզու,
Ո՞նց թե Կկվին ասել ես դու,
Թե ես կացին չունեմ սրած...
Կացին չունե՛մ... դե հիմի կա՛ց...
– Վա՛յ, քեզ մեղա,
Աղվես աղա,
Ես եմ ասել, չեմ ուրանում,
Ինձ քրքրի, ինձ կեր հում-հում,
Տո՛ւր, ինչ պատիժ սիրտդ կուզի,
Բայց մի վերջին խոսքս լսի:
Ես էն սարում՝ հենց դեմուդեմ,
Էնպես մի թանկ պահուստ ունեմ,
Որ չես գտնի դու քո օրում
Ոչ մի թառում կամ անտառում:
Ընչի՞ համար էն ահագին
Գանձը կորչի հողի տակին:
Արի գնանք, հանեմ տամ քեզ,
Էնքան ուտե՛ս, էնքան ուտե՛ս...
Թե չլինի, ու սուտ դուրս գամ,
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...

– Գնա՛նք, – ասավ Աղվեսը: – Թե կլինի, շատ լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի թփում պառկած էր գյուղացու շունը: Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի վրա:

– Ա՛յ, – ասեց, – էս թփումն է իմ պահուստը:

Աղվեսն ագահ վրա ընկավ թփին.
շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու
դրեց փակին: Աղվեսը խեղդվելով
սկսավ խռխռալ.

– Ա՜խ, ե՜ս... ա՜խ, ե՜ս...
Զգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ էսպե՜ս...

Ա՜խ, անիրա՜վ
Դու սև Ագռավ...
– Ինչքան էլ որ լինես զգույշ,
Չարի համար թե վաղ, թե ուշ
Էդ է պահված, Աղվես աղա,
Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛...
Պատասխանեց Ագռավն ու թռավ:

*Ժիրայր Ավետիսյան*

## ԳԱՅԱՆԵԻ ԴԱՍԸ (էջ 96)

**Ա**-ն արևն է պայծառ շողում,

**Բ**-ն բադիկն է ջրում լողում,

**Գ**-ն գառնուկն է՝ բրդե շորով,

**Դ**-ն դդումը՝ ուռած փորով,

**Ե**-ն էլ եզն է՝ ճանճը պոզին,

**Զ**-ն զանգակն է նրա վզին,

**Է**-ն էլ էշն է, բեռ է կրում,

**Ը**-ն ընկույզն է կողովներում,

**Թ**-ն թիթեռն է օդում պարում,
թևիկները թափահարում,

**Ժ**-ն՝ ժամացույց, որ չուշանաս,
ժամանակին դպրոց գնաս,

**Ի**-ն իլիկն է Լուսիկ տատի,
ինչքան ասես կպտտվի,

**Լ**-ն էլ՝ լուսին՝ լեռան ուսին,

**Խ**-ն խաղողն է քա՛ղցր-քա՛ղցր,

**Ծ**-ն ծիրանն է՝ ծառին բարձր,

**Կ**-ն կեռասն է՝ ճյուղի վրա,

**Հ**-ն հաղարջը՝ թփի վրա,

**Ձ**-ն էլ ձուկն է, լողում է, պե՜ս, պոչը թեքած՝

**Ղ**-ն ղեկի պես,

**Ճ**-ն ճնճղուկն է՝ փորը դեղին,
ճոճվում է նա ճկուն ճյուղին,

**Մ**-ն մողեսն է սողում արագ,
մեջքը՝ կանաչ, պոչը՝ բարակ,

**Յ**-ն էլ յոդն է, լցնես վերքին
յոթ ժամ անվերջ կմրմռքի,

**Ն**-ն նավակն է փոքրիկ լճում,
նավակի մեջ՝ երկու մրջյուն,

**Շ**-ն էլ շունն է՝ շղթան վզին,

**Ո**-ն՝ որսորդն է գնում որսի,

**Չ**-ն չամիչն է,

**Պ**-ն՝ պնդուկը.
պապն է լցրել մեծ սնդուկը,

**Ջ**-ն՝ ջրաղաց՝ ջրվեժի մոտ,
ջուրն է զցել ճիչ ու որոտ,

**Ռ**-ն ռանդան է՝ տաշում, հարթում,

**Ս**-ն վարպետի սղոցն է սուր,

**Վ**-ն՝ վարպետն է դուռ պատրաստում,

**Տ**-ն էլ տունն է, որ չունի դուռ,

**Ր**-ն րոպեն է.

**Ց**-ն՝ ա՜յ, ծաղկի ցողիկն է ջինջ,

**Ու**-ն ուլիկն է, ուտում է ուռ,

**Փ**-ն էլ փիղն է՝ կնճիթը ծուռ,

**Ք**-ն էլ քարն է՝ դրված պատին

**Օ**-ն՝ օդանավ ամպերի մեջ,

**Ֆ**-ն էլ՝ ֆուտբոլ...
և ... դասին վերջ:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1. Ձայնավորները տրված են կարմիր գույնով:
2. Բաղաձայնները տրված են կապույտ գույնով:
3. Ե, ո, և տառերը տրված են կանաչ գույնով:
4. Ե-ի, ո-ի, և-ի գծապատկերները տրված են այսպես՝ :
5. Գաղտնավանկի ը-ն գծապատկերներում տրված է նրբագծված վանդակով՝ :
6. Կետադրական նշանները ներկայացված են քառակուսու մեջ՝ :
7. նշանը պետք է լրացվի համապատասխանաբար՝ վանկով, բառով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ:
8. Հանելուկների պայմանական նշանն է՝ :
9. Շուտասելուկների պայմանական նշանն է՝ :
10. Ասացվածքների պայմանական նշանն է՝ :
11. Առաջադրանքների պայմանական նշանն է՝ :
12. Լրացուցիչ կամ շերտավոր ուսուցման համար նախատեսված էջ-դասերը նշված են * -ով: Դրանց ուսուցումը թողնվում է ուսուցչուհու հայեցողությանը:

## ԽԱՂԵՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
**(ուսուցչին)**

**էջ**

**10.** Խմբավորի՛ր նկար-բառերը. ուտելիք ցույց տվող նկար-բառերի գծապատկերները ներկի՛ր դեղին, իսկ սպասք ցույց տվող նկար-բառերի գծապատկերները՝ կանաչ:
**11. ա)** Ո՞ր նկար-բառերը միրգ չեն ցույց տալիս:
**բ)** Կորագծով նշի՛ր միավանկ բառերը:
**12. ա)** Ինչե՞րը կտեղավորես պայուսակիդ մեջ:
**բ)** Կորագծով նշի՛ր՝ քանի՞ վանկ ունի յուրաքանչյուր բառ:
**13. ա)** Խմբավորի՛ր՝ ո՞ր առարկաներն են պատկանում Արային, որո՞նք՝ Անիին:
**բ)** Կարմիրով կորագծի՛ր միավանկ բառերը, կանաչով՝ երկվանկ բառերը:
**14-15. ա)** Փորձի՛ր մեկ բառով ասել, թե ինչե՞ր են պատկերված երկու խումբ նկարներում (կենդանի-թռչուն):
**բ)** Կորագծերով նշի՛ր, թե քանի՛ վանկ ունի յուրաքանչյուր բառ:
**16.** Գծով միացրո՛ւ այն նկար-բառերը, որոնք բանջարեղեն չեն:

**17.** Որոշի՛ր, թե քանի՛ հնչյուն կա յուրաքանչյուր վանկում. կարող ես դու էլ նշել օրինակի պես:

**18.** Գունավորի՛ր նկարները:

**19. ա)** Գտի՛ր երկու նկարների տարբերությունները և պատմի՛ր:

**բ)** Կորագծով նշի՛ր, թե քանի՛ վանկ ունի յուրաքանչյուր բառ:

**20.** Նկար-բառերը ճի՛շտ տեղադրիր գծապատկերներում (տե՛ս նաև էջ 24):

**21.** Միավանկ նկար-բառերը միացրո՛ւ միավանկ բառի գծապատկերին, իսկ երկվանկ նկար-բառերը՝երկվանկ բառի գծապատկերին:

**23. ա)** Խմբավորի՛ր՝որո՞նք են ընտանի, որո՞նք՝վայրի:

**բ)** Դո՛ւք էլ ներդիրից կտրեցեք նկարները և խաղացե՛ք դասարանում:

**25.** Կազմի՛ր նկարների ճիշտ զույգեր:

**26. ա)** Ո՞ր փոխադրամիջոցին կհանդիպես փողոցում:

**բ)** Ձայնավորների վանդակներում կարմիր կե՛տ դիր:

**28. ա)** Ուշադիր դիտի՛ր և գտի՛ր նկարում տեղ գտած սխալները:

**բ)** Ներդիրից կտրի՛ր նկարները և ուղղի՛ր սխալները:

**29.** Պատմի՛ր. յուրաքանչյուր նկար-պատմությունից առանձնացրո՛ւ մեկ նախադասություն և վերլուծի՛ր օրինակի պես:

**30-31.** Որոշի՛ր նկարների հաջորդականությունը և պատմի՛ր: Փորձի՛ր յուրաքանչյուր նկար-պատմությունից առանձնացնել «ամենակարևոր» նախադասությունը:

**35.** Վանդակում գրի՛ր բաց թողնված ձայնավորները:

**39. 1)** Կազմի՛ր բառեր՝վանդակները լրացնելով տրված տառերով և գրի՛ր:

**2)** Կարդա՛ տրված և տառերի տեղափոխությամբ ստացված բառերը (տե՛ս նաև էջ 41):

**3)** Տրված տառերով կազմի՛ր մեկ բառ:

**4)** Կարդա՛ անունները և այդ բառերը գծերով ճիշտ միացրու երեխաներին:

**43. 1)** Օգտվելով տրված վանկից և նկարներից՝ կազմի՛ր բառեր. հարցական նշանների փոխարեն տեղադրի՛ր նոր վանկեր:

**2)** Միացրո՛ւ բառ-պատկերները:

**3)** Տրված տառերով կազմի՛ր բառեր(կարելի է կազմել եռահնչյուն և քառահնչյուն չորս բառ):

**45.** Տրված նկար-բառերը գտի՛ր վանդակներում, որտեղ գծիկը կրկնվող տառի նշանն է, իսկ կետը՝ նոր տառի նշանը:

**47. 1)** Թվերի և գունավոր գծերի օգնությամբ գտի՛ր բառը:

**2)** Լրացրո՛ւ վանդակները տառերով և ստացի՛ր բառեր (տե՛ս նաև էջ 93, 97):

**49.** Տրված բառերով և նկար-բառերով կազմի՛ր ճիշտ զույգեր:

**55.** Ներդիրից կտրի՛ր և փակցրո՛ւ խաղալիքները. կարդա՛, թե ի՛նչ բառեր են թաքնված խաղալիքների տակ:

**56.** Օգտվելով էջի բառերից և նկար-բառերից՝ ասա՛ օ-ով սկսվող երկվանկ, եռավանկ և քառավանկ բառեր:

**57.** Գտի՛ր փուչիկների վրա գրված բառերը. ներդիրից կտրի՛ր ճիշտ տառը (**օ** կամ **ո**) և փակցրո՛ւ հարցական նշանի փոխարեն:

**61.** Միացրո՛ւ վանկերը և կարդա՛ բառերը:

**63.** Նկար-բառերը կարդա՛ սյունակներով և զույգերով:

**69. ա)** Օգտվելով նկարներից՝ լրացրո՛ւ խաչբառը (տե՛ս նաև էջ 80, 90, 93):

**բ)** Ճի՛շտ միացրու վանկերը և կարդա՛ ստացված բառերը:

**71.** Կարդա՛ ասացվածքը:

**83.** Առաջին վանդակում տրված նկար-բառերի համար նույն շարքում գտի՛ր նույնահանգ բառը:

**86. 1.** Խմբավորի՛ր նույնահանգ նկար-բառերը:

**2.** Ճի՛շտ տեղադրիր բառերի կապակցությունները:

**87.** Կարդա՛ բառերը և նկարների հետ կազմի՛ր ճիշտ զույգեր:

**93.** Որոշի՛ր, թե ո՛ր նկար-բառն է ավելորդ, և լրացրո՛ւ խաչբառը:

**97.** Ասա՛ ո-ով սկսվող բառեր, որոնք կազմված լինեն 2, 3, 4, 5 հնչյուններից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ** ........ 2
**ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ** ........ 32
**Ա** հնչյուն-տառի ուսուցում ........ 32
**Ու** հնչյուն-տառի ուսուցում ........ 33
**Ի** հնչյուն-տառի ուսուցում ........ 34
**Ա Ու Ի** հնչյուն-տառերի ամրապնդում ........ 35
**Մ** հնչյուն-տառի ուսուցում ........ 36
**Ր** հնչյուն-տառի ուսուցում ........ 37
**Տ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 38-39
**Ն** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 40-41
**Կ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 42-43
**Պ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 44-45
**Մ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 46-47
**Ծ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 48-49
**Լ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 50-51
Նկար-պատմություն. **Պույպույ մուկիկը.** *Ըստ Դ. Դեմիրճյանի* ........ 52-53
**Է (ե)** հնչյուն-տառերի ուսուցում: Ամրապնդում ........ 54-55
**Օ (ո)** հնչյուն-տառերի ուսուցում: Ամրապնդում ........ 56-57
**Ը** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 58-59
**Դ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 60-61
**Յ** հնչյուն-տառի ուսուցում: Ամրապնդում ........ 62-63
**Ջ** հնչյուն-տառի ուսուցում ........ 64
**Վ** հնչյուն-տառի ուսուցում ........ 65
**Ռ** հնչյուն-տառի ուսուցում ........ 66
**Ղ** հնչյուն-տառի ուսուցում ........ 67
**Խ** հնչյուն-տառի ուսուցում ........ 68
**Ղ - Խ** հնչյուն-տառերի ամրապնդում ........ 69
**Ց** հնչյուն-տառի ուսուցում ........ 70
**Ժ** հնչյուն-տառի ուսուցում ........ 71
Նկար-պատմություն. **Չարի վերջը.** *Ըստ Հովհ. Թումանյանի* ........ 72-73

**Ե** տառի ուսուցում: Ամրապնդում ..................... 74-75
**Ո** տառի ուսուցում: Ամրապնդում ..................... 76-77
**Բ** հնչյուն-տառի ուսուցում. ***Պստլիկ Բալերը.*** *Ըստ Ս. Թանգարանյանի* ..................... 78
**Փ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 79
**Բ-Պ-Փ** հնչյուն տառերի ամրապնդում ..................... 80
**Գ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 81
**Ք** հնչյուն-տառի ուսուցում. ***Գիրքը.*** *Ս.Մուրադյան* ..................... 82
**Գ-Կ-Ք** հնչյուն-տառերի ամրապնդում ..................... 83
**Դ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 84
**Թ** հնչյուն-տառի ուսուցում. ***Թութակը.*** *Է.Միլիտոնյան* ..................... 85
**Դ-Տ-Թ** հնչյուն-տառերի ամրապնդում ..................... 86
**Ջ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 87
**Ճ** հնչյուն-տառի ուսուցում. ***Անճոռնի ճուտիկը***. *Ըստ Հ.Ք.Անդերսենի* ..................... 88
**Չ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 89
**Ջ-Ճ-Չ** հնչյուն-տառերի ամրապնդում ..................... 90
**Ձ** հնչյուն-տառի ուսուցում ..................... 91
**Ծ** հնչյուն-տառի ուսուցում. ***Ծիածան.*** *Աթ.Խնկոյան* ..................... 92
**Ձ-Ծ-Ց** հնչյուն-տառերի ամրապնդում ..................... 93
**և** հավելյալ տառանշանի ուսուցում և ամրապնդում. ***Զատիկ.*** *Գ. Եղիկյան* ..................... 94-95
**Ֆ** հնչյուն-տառի ուսուցում. ***Շունն ու հավը.*** *Ըստ Ե.Պետրոսյանի* ..................... 96
*ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ* ..................... 98

**ՀԵՏԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ**

***Հայերենի առաջին ուսուցիչը*** ..................... 99
***Հայոց լեզու.*** *Ըստ Ռ.Ղարիբյանի* ..................... 100
***Ողջույն ուսուցչին.*** *Ն.Միքայելյան* ..................... 101
***Փոքրիկ Մեսրոպը.*** *Վ. Հովսեփյան* ..................... 102
***Երբ որ տանն են.*** *Պ.Խաչատրյան* ..................... 103
***«Այբբենարանը».*** *Ա. Տեր-Գրիգորյան* ..................... 104
***Հրաժեշտ «Այբբենարանին».*** *Ս. Կապուտիկյան* ..................... 105
***Հավելված*** ..................... 106
Պայմանական նշաններ ..................... 119
Խաղերի առաջադրանքներ ..................... 119

**Ա. Ն. Քյուրքչյան, Լ. Ա. Տեր-Գրիգորյան**

# ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

**Նկարիչ՝**
*Սուսաննա Այվազյան*

Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 8 մամուլ: Տպաքանակը՝ 13 372:
Տպագրված է «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ տպարանում:

EDIT PRINT
43 Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am


տ
ե
ր


ս
ե
ր


ո
օ











